

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆԸ
ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ**
(15 սեպտեմբերի 2003 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից աղոթք և հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հայագիտական միջազգային գիտաժողովի մասնակիցներին և փառք ու գոհություն մատուցում Բարձրալիկն, որ Հայաստանի անկախության վերականգնումով հնարավոր է դարձել նման ընդգրկուն և ներկայացուցչական գիտաժողովի գումարումը հայոց Մայր Հայրենիքում:

Միջին հայագետներ, այսօր երջանիկ առիթն ունենք Մեր գնահատանքը բերելու ձեզ հայագիտության ասպարեզում ձեր վաստակյալ ծառայությանը համար: Մեր գնահատանքը ձեզ նաև այն նախանձախնդրության համար, որով արձագանքելով Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի և Երևանի Պետական Համալսարանի հրավերին՝ սեպտեմբերյան այս գեղեցիկ օրերին հավաքվել եք Երևանում՝ ներկայացնելու վերջին պատմամշակութային հայագիտության բնագավառում կատարված ուսումնասիրությունները, այսօր առկա անհրաժեշտությունները և նախանշելու հայագիտության հետագա ընթացքը ու զարգացումները:

Արդեն մի քանի հարյուրամյակ ուսումնասիրողներին հետաքրքրում են վաղնջական ժամանակներից սկիզբ առնող մեր ժողովրդի պատմությունը և մարդկային քաղաքակրթության ակունքներին առնչվող նրա մշակույթը: Արդարև, Արարապի փնջերին հազարամյակներ ապրող ու արարող մեր ժողովրդի ժառանգությունը շարժվում է կարգով և պարզությամբ մարդկության հնագույն անցյալի ու կենսագրության մասին: Բայց, մանավանդ, հոգևոր այն երթի մասին, որ պսակված է Փրկչի Հարությամբ և առ Քրիստոս հավաքի կյանքով, որը 4-րդ դարից ի վեր ակունքն է հայի գոյության ու դիմագիծը հայ իրականության: Հայագիտությունը ճանաչել է փայխ հայ ժողովրդի էությունը, քրիստոնյա Հայաստանի ոգին, այն ամենը, ինչ կոչվում է հայի հոգևոր աշխարհ:

Մենք ուրախ ենք, որ այսօր հայագիտության ասպարեզում կարևորվում է նաև ուսումնասիրվող նյութերի հոգևոր շերտի վերհանումը՝ իբրև գիտական ամբողջականության գրավական: Ուրախ ենք, որ վերանայվում են մեր պատմության խեղաթյուրումները, միտմնավոր գնահատականները, որ գնալով մեկ ամբողջականության մեջ է ընկալվում Հայ Եկեղեցու ու ժողովրդի պատմությունը և ընդլայնվում է Հայ Եկեղեցական ժառանգության ուսումնասիրությունը, առանց որի հնարավոր չէ ճանաչել հայոց մշակույթը ու ընկալել նրա իմաստն ու նպատակը:

Այս առումով Մենք առանձնակիորեն կարևորում ենք Եկեղեցու և գիտական հասարակությունների սերտ համագործակցությունը, որի արդահայությունն են հայագիտական

ուսումնասիրությունների հրապարակումը մեր Եկեղեցու կողմից, ինչպես նաև՝ մեր հոգևորականաց մասնակցությունը Հայաստանի գիտա-ուսումնական կյանքին: Կարևորում ենք մեր Եկեղեցու դերը նաև հայաստանյան և արտերկրի գիտնականների աշխատանքների համակարգման և գիտական տեղեկափոխության փոխանակման հարցում: Նման փորձառություն արդեն իսկ ունենք Հայաստանում քրիստոնեության պեղական կրոն հռչակման 1700-ամյակի հանդիսությունների շրջագծում վերջին տարիներին իրականացված տարբեր միջոցառումներով:

Գիտության սիրելի նվիրյալներ, Հայաստանի նորօրյա ազատ կյանքով զարգացման նոր հեռաստաններ են բացվել հայագիտության համար: Ձեր համերաշխ գործակցությամբ իրենց պատասխաններն են գտնելու վիճելի բազմաթիվ հարցեր, առաջ են քաշվելու և լուսաբանվելու նոր հարցադրումներ, փոխվելու են հայ ժողովրդի արդար դատին առնչվող ասանձին պետությանց ժամանակավրեպ մտայնությունները, որոնք այսօր այլևս հուզում են ոչ միայն հայ իրականությունը: Ձեր ուսումնասիրությունները, գնահատականներն ու եզրակացությունները օգնելու են ընդառաջ ելնելու արդի հայ կյանքի հրամայականներին և գտնելու արդյունավետ կարգավորումներ՝ ի շինություն ազգային մեր կյանքի և ի գորացում մեր Հայրենիքի:

Վերստին հանուն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ողջունում ենք ձեզ գիտաժողովի բացման առիթով և բարի ընթացք մատթում ժողովի աշխատանքներին: Առ Աստված աղոթքով հայցում ենք, որ այն նոր քայլ դառնա հայագիտության առաջագնաց ճանապարհին: Թող Տերը միշտ շնորհի մեջ պահպանի ձեզ՝ պարգևելով սրեղծագործական ավյուն և գիտական նորանոր ձեռքբերումներ: Ամեն: